ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 մայիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

67
(3276)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐ



ArmLur.am-ը մասնագիտական շրջանակների հետ զրույցներից առանձնացրեց մի քանի կարեւոր խնդիր, որը վերաբերում էր ոչ թե զինտեխնիկայի շքերթին, այլ հենց բանակի մարտունակությանը, քանի որ զինվորական շքերթը միայն երկաթե առարկաների ցուցադրություն չպետք է ենթադրի: Ըստ մասնագետների՝ մայիսի 28-ին Նիկոլ Փաշինյանի կողմից եւ ղեկավարությամբ կազմակերպված զինվորական շքերթին առաջին անգամ հայկական բանակի պատմության մեջ Արցախի պաշտպանական բանակը չկար, չէր մասնակցում: Ինչպես հայտնի է, Արցախի էթնիկ զտումից եւ հայազրկումից հետո 2023-ից նույն հետեւողականությամբ, ինչ ադրբեջանական կողմը, Նիկոլ Փաշինյանի կառավարությունը կազմալուծեց Արցախի բանակը իր հերթին, հիմա էլ՝ սպայական անձնակազմին ծանուցումներ են ուղարկել, որ դուրս գան բնակարաններից, որոնք տրվել են նրանց՝ որպես արցախցի սպաների:

Երկրորդ կարեւոր տարբերությունը մյուս բոլոր ռազմական շքերթների հետ այն էր, որ գնդերեցները չկային: Ինչպես հայտնի է, այս տարվա հունվարի 30-ից Սուրեն Պապիկյանը հայտարարեց, որ դադարեցվում է Հայ առաքելական եկեղեցու կողմից բանակում նշանակված հոգեւորականների՝ գնդերեցների ծառայությունը: Նրա որոշմամբ՝ գնդերեցներն այսուհետեւ կգործեն Գլխավոր շտաբի բարոյահոգեբանական վարչության համակարգմամբ:

Էլ չասենք, որ այս շքերթին չէր մասնակցում նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդը, ընդդիմադիր շրջանակներից որեւէ ներկայացուցիչ չկար: ՊՆ քաղաքականացված, իսկ ավելի ճիշտ կուսակցականացված զորահանդեսը մեր հիշողության մեջ կմնա որպես ՔՊ քարոզարշավի օրերից մեկը՝ պետության միջոցներով, հարկատուների հաշվին:

Կառուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) հրապարակել է ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ դաշինքների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների շարժերի վերաբերյալ տեղեկանքը՝ 20/05/2026-22/05/2026 ժամանակահատվածի համար: Տվյալները ներառում են կուսակցությունների մուտքերը, ելքերը, նվիրատվությունները, վարձակալական ծախսերը, հարկերը եւ հաշվային մնացորդները: Հրապարակված տվյալների համաձայն՝ ամենախոշոր ֆինանսական շարժը արձանագրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մոտ: Կուսակցությունը ստացել է 85,476,600 դրամ նվիրատվություն՝ 191 անձից, ինչպես նաեւ 144,300 դրամ անդամավճար եւ 18,977,600 դրամ պետական ֆինանսավորում: Ելքերը կազմել են 120,337,160 դրամ, որի հիմնական մասը՝ 120 մլն դրամ, փոխանցվել է նախընտրական հիմնադրամ (70 մլն՝ 2026 թվականի մայիսի 21-ին եւ 50 մլն՝ մայիսի 22-ին), ինչպես նաեւ ներառել է 5,586,000 դրամ հարկային վճարներ: Կուսակցության բանկային մնացորդը կազմել է 78,336,889 դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ Սիրանույշ Սահակյանը ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է մայիսի 26-ին Բաքվի վերաքննիչ դատարանում տեղի ունեցած նիստին, որտեղ քննվել են հայ գերիների, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության գործերով ներկայացված բողոքները: Սահակյանի խոսքով՝ Ռուբեն Վարդանյանի գործը վերաքննիչ ատյանում չի քննվելու, քանի որ նա դեռ սկզբնական փուլում հրաժարվել էր բողոքարկումից՝ այն համարելով անարդյունավետ: Նա նշել է, որ գործով ձեւավորվել է նոր դատական կազմ, իսկ կողմերը սահմանափակվել են ինքնությունների ճշտմամբ: Ըստ Սահակյանի՝ դատարանը որոշել է շարունակել քննությունը՝ առանց լրացուցիչ ապացույցների ուսումնասիրման, ինչի արդյունքում վերաքննիչ գործընթացը ծավալային առումով գրեթե չի տարբերվելու առաջին ատյանի դատավարությունից: Հաջորդ նիստը նշանակվել է հունիսի 2-ին: Սիրանույշ Սահակյանի գնահատմամբ՝ դատավարություններից արդարացման կամ պատժի մեղմացման ակնկալիքներ չկան: Նրա խոսքով՝ գործընթացը հիմնականում ծառայում է Ադրբեջանի ներքին քարոզչական եւ հակահայկական օրակարգին:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտը» պատասխանել է, սակայն ներկայացված պարզաբանումները ավելի շատ նոր հարցեր են առաջացնում, քան փարատում հանրային կասկածները: Խնդիրը վերաբերում է «Առողջապահության կազմակերպում եւ կառավարում» նեղ մասնագիտացման ծրագրին, որտեղ վերջին տարիներին սովորել կամ սովորում են առողջապահական համակարգի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք: Մինչդեռ հարցը հենց այն էր, թե ինչպես է հնարավոր առկա ուսուցման ձեւաչափը համատեղել ամբողջ դրույքով ղեկավար աշխատանքի, հիվանդանոցների կառավարման կամ քաղաքական գործունեության հետ: ԱԱԻ-ն իր պատասխանում հաստատում է, որ ծրագիրն իրականացվում է առկա ձեւաչափով, սակայն չի պատասխանում, թե շաբաթական քանի ժամ է նախատեսված ուսումնական գործընթացը, ինչպիսի հաճախելիություն է ապահովվել, ինչպես են հաշվառվել բացակայությունները եւ ինչ չափով է իրականում իրականացվել առկա ուսուցումը: Փոխարենը ինստիտուտը նշում է, որ ծրագիրը նախատեսված է արդեն գործող առողջապահական մասնագետների համար, եւ այդ պատճառով դասերի կազմակերպումը «հարմարեցված է» ոլորտում աշխատող անձանց զբաղվածությանը:



⇨ *էջ 3*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՏԵՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ»

Armlur.am-ը զրուցել է «Միասնության թեւեր» կուսակցության ղեկավարության թեկնածու Նարեկ Պարոնյանի հետ:

- Ձեր կուսակցության հիմնական ուղերձը ո՞րն է քաղաքացիներին:

- Կուսակցության նախընտրական ծրագրերը մանրամասն ներկայացված են թե՛ անվտանգային, թե՛ տնտեսական, թե՛ աշխարհաքաղաքական եւ թե՛ կրթական ոլորտներում: Սակայն մեր հիմնական ուղերձը հետեւյալն է՝ տեր կանգնենք Հայաստանի Հանրապետությանը: Մենք պետք է կասեցնենք «Արեւմտյան Ադրբեջան» քաղաքական ծրագիրը, որի նպատակն է Հայաստանը վերածել ադրբեջանական ենթապետության: Հունիսի 7-ին, ընտրելով թիվ 6 քվեաթերթիկը, պետք է մինչեւ վերջ մերժենք հակահայաստանյան կոնցեպտը, հեռացնենք իշխանությունից այն մարդկանց, ովքեր Հայաստանը հասցրել են այս վիճակին: Մեր նպատակը միասնական ուժերով վերականգնել Հայաստանի անվտանգությունը, արժանապատվությունը եւ առաջ շարժվելու կարողությունն է: Սա է մեր քարոզարշավի հիմնական գաղափարը՝ մարդկանց համոզել անպայման մասնակցել ընտրություններին: Այս ընտրությունները սովորական ընտրություններ չեն: Սրանք, թերեւս, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ամենակարեւոր ընտրություններն են, որովհետեւ որոշվելու է Հայաստանի ապագան՝ ունենալո՞ւ ենք Հայաստանը, թե՞ այն վերածվելու է հակահայաստանի:

- Իշխանությունները հայտարարում են, որ խաղաղություն են բերել: Եթե դուք լինեք իշխանության, ինչպե՞ս եք շարունակելու խաղաղության գործընթացը:

- Նախ պետք է վերջ դնել Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմի ստախոսությանը: Այս իշխանությունները որեւէ կապ չունեն խաղաղության հետ: Այս տարիներին եղել են պատերազմներ, Արցախի էթնիկ զտում, տարածքային կորուստներ, հազարավոր զոհեր եւ վիրավորներ: Այդ ամենից հետո խաղաղության մասին խոսելը պարզապես մանիպուլյացիա է: Մենք համոզված ենք, որ իրական խաղաղություն հնարավոր է միայն երեք կարեւոր պայմանների առկայությամբ.

Ուժեղ եւ հուսալի բանակ

Կոնսոլիդացված եւ արժանապատիվ հասարակություն

Հուսալի միջազգային գործընկերներ եւ դաշնակիցներ:

Առանց անվտանգության չի կարող լինել խաղաղություն: Ուստի մեր առաջնահերթությունը լինելու է անվտանգային համակարգի վերականգնումը:

- Այսինքն՝ դուք չե՞ք շարունակելու ներկայիս իշխանության քաղաքականությունը:

- Ոչ: Մենք չենք կարող շարունակել այն քաղաքականությունը, որը, մեր համոզմամբ, Հայաստանը տանում է դեպի կործանում: Այս իշխանությունները կանգ են առել մի կետում, որտեղ Հայաստանը փաստացի վերածվում է թուրքական կամ ադրբեջանական ենթակայության տարածքի: Մենք եկել ենք այդ գործընթացը կանգնեցնելու եւ իրական պետականություն վերականգնելու համար: Բոլոր նրանք, ովքեր ասում են՝ «շարունակելու ենք այն, ինչ սկսել է Նիկոլ Փաշինյանը», ըստ էության շարունակում են նույն կործանարար ուղին:

- Դուք խոսեցիք զոհերի եւ պատերազմի հետեւանքների մասին: Ի՞նչ եք նախատեսում այդ հարցում:

- Մենք պահանջում ենք հրապարակել զոհերի ամբողջական ցուցակները եւ հանրայնացնել պատերազմի քննիչ հանձնաժողովների տվյալները: Հասարակությունը պետք է իմանա՝ ինչ է տեղի ունեցել, ովքեր են պատասխանատուները, եւ ինչպիսի որոշումների հետեւանքով երկիրը հասավ այս իրավիճակին: Իշխանափոխությունից հետո մենք հետեւողականորեն բացահայտելու ենք բոլոր հանգամանքները, որպեսզի ժողովուրդը տեսնի իրական պատկերը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՌՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՀԱՆՋԵԼ Է

Ռուսական անօդաչու թռչող սարքը հարվածել է Ռումինիայի բնակելի շենքերից մեկին՝ վիրավորելով երկու մարդու: Միջադեպը տեղի է ունեցել ուրբաթ վաղ առավոտյան Ռումինիայի արեւելքում գտնվող Գալացի քաղաքում, երբ Ռուսաստանը հերթական հարձակումներն էր իրականացնում Ուկրաինայի սահմանամերձ շրջանների ուղղությամբ:

Ռումինիայի պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ անօդաչու սարքը մուտք է գործել երկրի օդային տարածք եւ ռադարների միջոցով հետեւվել մինչեւ Գալացի քաղաքի հարավային հատված, որտեղ այն բախվել է բազմաբնակարան շենքի տանիքին: Հարվածից հետո շենքում հրդեհ է բռնկվել: Ռումինիայի Արտակարգ իրավիճակների գլխավոր տեսչության տվյալներով՝ դրոնի ամբողջ պայթուցիկ բեռը գործի է դրվել հարվածի պահին, ինչի հետեւանքով հրդեհ է բռնկվել շենքի 10-րդ հարկում: Տուժած երկու քաղաքացիները ստացել են թեթեւ վնասվածքներ եւ բուժօգնություն են ստացել տեղում: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ շենքից տարհանվել է շուրջ 70 բնակիչ:

Ռուսաստանի կողմից մինչ այժմ որեւէ պաշտոնական մեկնաբանություն չի հնչել:

Ռումինիայի արտաքին գործերի նախարարությունը միջադեպը բնութագրել է որպես «Ռուսաստանի Դաշնության կողմից լուրջ եւ անպատասխանատու էսկալացիա»: Բուխարեստը նաեւ հայտնել է, որ արդեն տեղեկացրել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին եւ պահանջել արագացնել հակադրոնային պաշտպանության միջոցների փոխանցումը Ռումինիային:

ՆԱՏՕ-ն եւս արձագանքել է միջադեպին: Դաշինքի ներկայացուցիչը X սոցիալական ցանցում հրապարակած հայտարարության մեջ դատապարտել է «Ռուսաստանի անպատասխանատու գործողությունները»՝ նշելով, որ ՆԱՏՕ-ն շարունակելու է ուժեղացնել պաշտպանությունը բոլոր սպառնալիքների, այդ թվում՝ անօդաչու սարքերի դեմ:

Ռումինիայի պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ անօդաչու սարքերի հայտնաբերումից հետո օդ են բարձրացվել F-16 կործանիչներ: Ըստ գերատեսչության՝ դրանցից մեկը մտել է Ռումինիայի օդային տարածք եւ ի վերջո ընկել բնակելի շենքի վրա:

Գալացի քաղաքը գտնվում է Դանուբ գետի ափին, որը տվյալ հատվածում սահման է կազմում Ուկրաինայի հետ: Ուկրաինական նավահանգիստները, մասնավորապես Օդեսայի մարզի Իզմայիլ նավահանգիստը, պարբերաբար ենթարկվում են ռուսական օդային հարձակումների:

Սա առաջին դեպքն է Ուկրաինայում պատերազմի սկսվելուց ի վեր, երբ ռուսական անօդաչու սարքի հարվածից Ռումինիայի քաղաքացիներ են տուժում: Ավելի վաղ՝ ապրիլին, մեկ այլ ռուսական դրոն նույնպես ընկել էր Գալացիում՝ պատճառելով նյութական վնաս, սակայն առանց զոհերի կամ վիրավորների:

Ռումինիայի պաշտպանության նախարարության տվյալներով՝ 2022 թվականի փետրվարին Ուկրաինայում պատերազմի սկսվելուց հետո ռուսական անօդաչու սարքերի բեկորներ երկրի տարածքում հայտնաբերվել են առնվազն 47 անգամ, որոնցից 12-ը՝ միայն այս տարի:

Միաժամանակ Ուկրաինայում գիշերվա ընթացքում օդային տագնապ է հայտարարվել ամբողջ երկրի տարածքում: Ուկրաինայի հարավում գտնվող Օդեսայի մարզի իշխանությունները հայտնել են, որ ռուսական դրոնների հարձակման է ենթարկվել նաեւ Իզմայիլ նավահանգիստը:

Իսկ Ուկրաինայի արեւելքում՝ Ռուսաստանի վերահսկողության տակ գտնվող Դոնեցկի մարզում, տեղի ունեցած ուկրաինական անօդաչու հարձակման հետեւանքով, ըստ ռուսական կողմի, զոհվել են երեք կոմունալ ծառայության աշխատակիցներ: Տարածաշրջանի ռուսամետ ղեկավար Դենիս Պուշիլինի խոսքով՝ եւս մեկ մարդ ծանր վիրավորվել է:

Թարգմանությունը՝ ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱԺ ԳՆԱԼՈՒ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հունիսի 9-ին թեժ է լինելու խորհրդարանում: Մենք տեղեկացանք, որ այդ օրը նախատեսված է իրավապահ մարմինների այցը ԱԺ-ը: Բանն այն է, որ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովներում ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը պետք է ներկայացնի ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի տարեկան զեկույցը: Մենք տեղեկացանք, որ այդ օրը զեկույց կներկայացնեն նաեւ ՀՀ ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը, արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստինե Գրիգորյանը, ԱԱԾ պետ Անդրանիկ Սիմոնյանը, ՊՊԾ պետ Արթուր Գասպարյանը: Իրավապահները կներկայացնեն, թե պետական բյուջեն ինչի վրա են ծախսել: Նշենք, որ արդեն գրել էինք, որ հունիսի 8-ին ԱԺ կգնա նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ս. Գ.

ՆՈՐ ԲԵՌ

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Ադրբեջանի տարածքով Ռուսաստանից դեպի Հայաստան հերթական տարանցիկ բեռնափոխադրումն է իրականացվելու: Trend գործակալության փոխանցմամբ՝ մայիսի 29-ին Բալաջարի կայարանից դեպի Բեռք-Քեսիք կուղարկվի 4 վագոն ցորեն՝ ընդհանուր 280 տոննա քաշով, ինչպես նաեւ 4 վագոն պարարտանյութ՝ ընդհանուր 277 տոննա քաշով:Ադրբեջանական կողմի տվյալներով՝ մինչ օրս Ռուսաստանից Հայաստան Ադրբեջանի տարածքով արդեն տեղափոխվել է ավելի քան 28 հազար տոննա հացահատիկ, ավելի քան 4 հազար տոննա պարարտանյութ, 133 տոննա ալյումին եւ 68 տոննա հնդկաձավար: Լրատվամիջոցները նաեւ նշում են, որ տարանցիկ բեռնափոխադրումներին զուգահեռ շարունակվում է նաեւ Ադրբեջանից Հայաստան նավթամթերքների արտահանումը: Ըստ հրապարակված տվյալների՝ Ադրբեջանից Հայաստան արդեն արտահանվել է ավելի քան 10 հազար տոննա դիզվառելիք, 979 տոննա ԱԻ-92 բենզին եւ 2955 տոննա ԱԻ-95 բենզին:

Ա. Վ.

ՉԵՆ ԱԶԴԻ

ՌԴ տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովը հայտարարել է, որ Ռուսաստանում Հայաստանից մրգերի եւ բանջարեղենի ներմուծման սահմանափակումները չեն ազդի գնաճի վրա եւ որեւէ խնդիր չեն ստեղծի ՌԴ-ի համար: Նրա խոսքով՝ ռուսական շուկան հիմնական սպառումը ապահովում է սեփական արտադրության հաշվին, ինչպես նաեւ ունի բավական բազմազան մատակարարների համակարգ: Ռեշետնիկովը նշել է. «Մեր շուկաների վրա ազդեցություն չի լինի: Երբ ինձ հարցնում էին՝ ինչ կլինի գնաճի հետ, մենք վիճակագրորեն այդ թվերը չենք նկատի»: Նա ընդգծել է, որ Հայաստանից ներմուծման սահմանափակումները որեւէ դժվարություն չեն առաջացնի: Ավելի վաղ Ռոսսելխոզնադզորը հայտարարել էր, որ մայիսի 30-ից սահմանափակում է ՀՀ-ից ՌԴ մրգերի եւ բանջարեղենի ներմուծումը՝ ֆիտոսանիտարական անվտանգության ապահովման նպատակով: Բացի այդ, մայիսի 22-ից ժամանակավորապես արգելվել է նաեւ ծաղիկների ներմուծումը:

ՈՐՈՇՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քրեական գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է դատարան: Նարեկ Ադամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մեղադրվում է պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված այն արարքները կատարելու համար, ըստ որի՝ 2025 թվականի դեկտեմբերի 15-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի իրենց տանը, սառը զենք հանդիսացող դանակով սպանել՝ ապօրինաբար կյանքից զրկել է իր մերձավոր ազգական հանդիսացող ծնողներին՝ Ս. Ադամյանին եւ Ն. Ադամյանին:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 16-ին սպանություններ էին տեղի ունեցել Շիրակի մարզում: Ժամը 10:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Շիրակի մարզի քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի տներից մեկում դիեր կան: Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, ովքեր հրաժարվել էին տեսախցիկի առաջ խոսել, ասել էին. «Քիչ առաջ տեսանք, թե ինչպես ոստիկաններն ու պարեկները եկան, տունը շրջափակեցին, մի 10 րոպե անց՝ ի՞նչ էին ման գալիս՝ չգիտենք, մենակ էն տեսանք, որ Նարեկին բռնեցին, տարան, հետո իմացանք սարսափ հիշեցնող ֆիլմի մասին, թե ոնց է Նարեկը իր մեծահասակ ծնողներին սպանել՝ դանակի մի քանի հարվածներով: Ճիշտն ասած՝ ցավալի դեպք է, բայց լավ է, որ ոստիկանները շուտ եկան, առողջական խնդիրներ ունեցող Նարեկին տարան: Վստահ ենք՝ եթե մի քիչ ուշանային, չէր բացառվում, որ նա կարող էր էլի մարդկանց սպանել: 7 տարի առաջ էլ Նարեկը սպանության փորձ էր արել իր ծնողների նկատմամբ եւ երկար տարիներ հաշվառված է եղել հոգեբուժական կենտրոններից մեկում»:

Ք. Մ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ

Ռուսաստանի նախագահի եւ Միեր Գրիգորյանի միջեւ առանձին հանդիպում նախատեսված չէ, սակայն նրանք կարող են զրուցել Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) գագաթնաժողովի շրջանակում: Այս մասին լրագրողներին հայտնել է Ռուսաստանի նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը: «Ոչ, առանձին հանդիպում նախատեսված չէ, բայց եթե նրանք ցանկանան, նրանք կարող են հիանալի կերպով զրուցել գագաթնաժողովի շրջանակներում»,-նշել է Պեսկովը: Նրա խոսքով՝ Վլադիմիր Պուտինի եւ Միեր Գրիգորյանի հանդիպումը չի բացառվում. «Եթե նրանք նպատակահարմար գտնեն, ապա նրանք կհանդիպեն»:

Պեսկովը նաեւ ընդգծել է, որ այժմ սկսվում է գագաթնաժողովը նեղ կազմով, որտեղ կքննարկվեն առավել զգայուն թեմաները:

Ա. Վ.

ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՌԿԱ՞, ԹԵ՞ «ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ» ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտը» պատասխանել է, սակայն ներկայացված պարզաբանումները ավելի շատ նոր հարցեր են առաջացնում, քան փարատում հանրային կասկածները:

Խնդիրը վերաբերում է «Առողջապահության կազմակերպում եւ կառավարում» նեղ մասնագիտացման ծրագրին, որտեղ վերջին տարիներին սովորել կամ սովորում են առողջապահական համակարգի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք: Մինչդեռ հարցը հենց այն էր, թե ինչպես է հնարավոր առկա ուսուցման ձեւաչափը համատեղել ամբողջ դրույքով ղեկավար աշխատանքի, հիվանդանոցների կառավարման կամ քաղաքական գործունեության հետ:

ԱԱԻ-ն իր պատասխանում հաստատում է, որ ծրագիրն իրականացվում է առկա ձեւաչափով, սակայն չի պատասխանում, թե շաբաթական քանի ժամ է նախատեսված ուսումնական գործընթացը, ինչպիսի հաճախելիություն է ապահովվել, ինչպես են հաշվառվել բացակայությունները եւ ինչ չափով է իրականում իրականացվել առկա ուսուցումը:

Փոխարենը ինստիտուտը նշում է, որ ծրագիրը նախատեսված է արդեն գործող առողջապահական մասնագետների համար, եւ այդ պատճառով դասերի կազմակերպումը «հարմարեցված է» ոլորտում աշխատող անձանց զբաղվածությանը:

Հենց այս ձեւակերպումն էլ, ըստ էության, հաստատում է այն, ինչի շուրջ ծագել էին կասկածները. դասապրոցեսը կազմակերպվել է ոչ թե դասական կրթական տրամաբանությամբ, այլ ծրագրի մասնակիցների աշխատանքային գրաֆիկներին համապատասխան:

ԱԱԻ-ն նաեւ ընդունում է, որ ծրագրում կիրառվել է առցանց ուսուցում՝ արտերկրում գտնվող դասախոսների ներգրավման նպատակով: Ըստ պատասխանի՝ այդ դեպքերում պահպանվում են մասնակցության եւ միացումների տվյալները: Սակայն ինստիտուտը չի պարզաբանում՝ առցանց դասերի ինչ մասնաբաժին է եղել ընդհանուր ծրագրում եւ արդյոք այդ ծավալը համապատասխանում է «առկա ուսուցման» պետական չափորոշիչներին:

Հատկանշական է, որ ԱԱԻ-ն հրաժարվել է տրամադրել վերջին հինգ տարիների շրջանավարտների կամ սովորողների ցանկը՝ հղում անելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքին: Միաժամանակ հայտնել է միայն, որ ծրագրի վերջին հինգ տարիների շրջանավարտների թիվը կազմել է 113, եւ նրանց թվում առողջապահության նախարարությանը ենթակա բուժհաստատությունների տնօրեններ չեն եղել: Սակայն ինստիտուտը չի պատասխանել հարցման մի շարք առանցքային կետերի՝ ովքեր են եղել ծրագրի մասնակիցները, քանի տոկոս է կազմել փաստացի ֆիզիկական մասնակցությունը, ովքեր են դասավանդել երեկոյան կամ հանգստյան օրերին, վճարվել է արդյոք արտաժամյա աշխատանքի համար, եւ ամենակարեւորը՝ ինչ մեխանիզմներով է երաշխավորվել, որ կրթությունը չի վերածվել ձեւական գործընթացի՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար հերթական որակավորման փաստաթուղթ ստանալու նպատակով:

Այլ կերպ ասած՝ ԱԱԻ-ի պատասխանը հաստատում է ծրագրի «հարմարեցված» բնույթը, սակայն շրջանցում է այն հիմնական հարցերը, որոնց պատասխանները կարող էին փարատել հանրային կասկածները կրթական գործընթացի իրական բովանդակության եւ հավասար պայմանների ապահովման վերաբերյալ: Հենց այդ պատճառով հարցն առայժմ մնում է բաց՝ գործ ունենք լիարժեք հետավարտական կրթությա՞ն, թե՞ պաշտոն զբաղեցնող անձանց համար հատուկ կազմակերպված ուսումնական գործընթացի հետ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱԿ ՆԻՍՏՈՒՄ ԿՔՆՆԱՐԿՎԻ

Աստանայում ընթանում է Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի (ԵԱՏՄ) նիստը, որին մասնակցում է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, իսկ ՀՀ-ից փոխվարչապետ Միեր Գրիգորյանը: Միջոցառումը սկսվել է նեղ կազմով հանդիպմամբ, որին մասնակցել են նաեւ Ղազախստանի, Բելառուսի, Ղրղզստանի ղեկավարները եւ Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանը: Ըստ ՌԴ լրատվամիջոցների ակնկալվում է, որ փակ ձեւաչափով նրանք կքննարկեն Երեւանի՝ ԵՄ-ին անդամակցելու ծրագրերը: Այնուհետեւ նիստը կշարունակվի ընդլայնված ձեւաչափով, որին կմիանան Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոեւը, Կուբայի փոխնախագահ Սալվադոր Վալդես Մեսան եւ Իրանի արդյունաբերության, հանքերի եւ առեւտրի նախարար Մոհամմադ Աթաբակը: Ներկայիս նիստը ԵԱՏՄ-ի 26-րդ հանդիպումն է կազմակերպության ստեղծումից ի վեր եւ առաջինը՝ այս տարի: Լիդերները կլսեն մի շարք զեկույցներ, այդ թվում՝ մինչեւ 2025 թվականը Եվրասիական տնտեսական ինտեգրման ռազմավարական ուղղությունների իրականացման եւ Եվրասիական զարգացման բանկի 20-ամյա գործունեության արդյունքների վերաբերյալ: Նիստի ընթացքում նաեւ սպասվում են որոշումներ՝ Թունիսի հետ ազատ առեւտրի համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկի եւ Սերբիայի հետ գործող պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Պուտինը գտնվում է Աստանայում եռօրյա պետական այցով: Հինգշաբթի նա բանակցություններ է վարել Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ, որից հետո ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ բարեկամության եւ բարիդրացիության հիմքերի մասին համատեղ հայտարարություն:

Թարգմանությունը՝ ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՉԱՓԵՐ

Կառավարությունն ընդունել է որոշում, որով նախատեսվում է «Պաշտպան հայրենյաց» ծրագրով ծառայություն անցնող զինծառայողների կողմից հերթական պայմանագիր կնքելու դեպքում սահմանել պատվովճարի չափեր: Ինչպես նշել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանը, 2 տարի ժամկետով հերթական պայմանագիր կնքելու դեպքում պատվովճարի չափը սահմանվել է 1,5 մլն դրամ, իսկ 5 տարի ժամկետով հերթական պայմանագիր կնքելու դեպքում՝ 5 մլն դրամ: «Փոփոխվում է նաեւ «Պաշտպան հայրենյաց» ծրագրով պայմանագրային ծառայության փոխադրվելու համար սահմանված ժամկետը, որի արդյունքում ծրագրով պայմանագրային զինվորական ծառայության անցնելու դիմում կարող են ներկայացնել պարտադիր զինվորական ծառայության՝ 4 ամիսը լրացած զինծառայողները՝ նախկին 6 ամսվա փոխարեն»,- ասել է փոխնախարարը: Արման Սարգսյանը նշել է, որ ստացվում է՝ ժամկետային զինծառայողը, որը զորակոչվում է բանակ 18 տարին լրանալուն պես, 4 ամիս հետո կարող է դառնալ պայմանագրային, արդեն օգտվել պայմանագրային զինծառայողի համար նախատեսված աշխատավարձից, ատեստավորվելու հնարավորությունից, ստանալ այդ ժամանակահատվածում աշխատավարձ, ծառայել իր բնակության վայրին մոտ նախորոշված իր համար ցանկալի զորամասում եւ 5 տարվա պարագայում ստանալ 5 մլն դրամ, իսկ 10 տարվա պարագայում՝ եւս 5 մլն: Այսինքն՝ զինծառայողը կստանա եւ աշխատավարձ, իսկ 10 տարի ծա ծառայելուց հետո, ընդհանուր վերցրած աշխատավարձից բացի, կստանան նաեւ 10 մլն դրամ պատվովճար:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) առաջնորդների հանդիպման շրջանակում կարճ կարծիքներ են փոխանակել Հայաստանի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Այս մասին հայտնել է Ռուսաստանի նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը: Նրա խոսքով՝ առաջնորդները «մի քանի անգամ խոսել են» հանդիպման շրջանակում, սակայն Հայաստանի վերաբերյալ քննարկումը եղել է կարճ եւ ոչ խորքային: «Հայաստանի հարցով տեղի է ունեցել միայն կարճ կարծիքների փոխանակում, բայց որեւէ բովանդակային խոսակցություն չի եղել, պարզապես ժամանակ չի եղել»,-նշել է Պեսկովը՝ պատասխանելով լրագրողների հարցին:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է 79 ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում 2026 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում ընտրական գործընթացի հետ կապված հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 79 քրեական վարույթ, որի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 38 անձի նկատմամբ, որոնցից 15-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, 11-ի նկատմամբ՝ տնային կալանքը, 6-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, 1-ի նկատմամբ՝ դաստիարակչական հսկողությունը, 5-ի նկատմամբ՝ բացակայելու արգելքը եւ 3-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, հայտարարվել հետախուզում:

Այսպես՝

● ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածով (ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը) նախաձեռնվել է 6 քրեական վարույթ, որից 1-ի նախաքննությամբ հիմնավորվել է Քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածով նախատեսված ընտրակաշառք տալու հանգամանքը եւ ըստ քննչական ենթակայության՝ քրեական վարույթն ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, 1 քրեական վարույթ 2 մեղադրյալի մասով (խափանման միջոցներ են կիրառվել՝ կալանք, վարչական հսկողություն եւ գրավ) ուղարկվել է դատարան, 2 քրեական վարույթով ներգրավվել է 3 մեղադրյալ, որոնցով նախաքննությունը շարունակվում է (1 մեղադրյալի համակցությամբ մեղսագրվել է նաեւ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելու հանցակազմը, ում նկատմամբ հայտարարվել է հետախուզում, խափանման միջոցը՝ կալանք, մյուս մեղադրյալին մեղսագրվել է Քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը, խափանման միջոցը՝ բացակայելու արգելք, իսկ 3-րդ մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում եւ խափանման միջոց է ընտրվել կալանքը), եւս 2 քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

● ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածով (քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը) նախաձեռնվել է 36 քրեական վարույթ, որից 2 քրեական վարույթով ներգրավվել է 13 մեղադրյալ (7-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ 6-ի նկատմամբ՝ տնային կալանքը, այդ թվում 3-ը՝ համակցված գրավ), 3 քրեական վարույթ միացվել է այլ վարույթների, 28 վարույթով նախաքննությունը շարունակվում է, իսկ 3 քրեական վարույթ կարճվել է:

● ՀՀ քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածով (հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաեւ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը) նախաձեռնվել է 28 քրեական վարույթ, որից 11 քրեական վարույթով ներգրավվել է 20 մեղադրյալ (4 մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, 1-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում եւ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, 5-ի նկատմամբ՝ տնային կալանք, 5-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը, 1-ի նկատմամբ՝ դաստիարակչական հսկողությունը, 4-ի նկատմամբ՝ բացակայելու արգելք): 28 քրեական վարույթից 3-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 9 քրեական վարույթ միացվել է, եւս 16 վարույթով նախաքննությունը շարունակվում է:

● ՀՀ քրեական օրենսգրքի 449-րդ հոդվածով (պաշտոնատար անձի կարգավիճակ ձեռք բերելուն կամ պահպանելուն խոչընդոտող տեղեկությունները թաքցնելը) նախաձեռնվել է 9 քրեական վարույթ, որոնց նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 9 անձ ՀՀ քաղաքացիությունից բացի ունենալով նաեւ օտարերկրյա քաղաքացիություն, դիմել է ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն՝ խնդրելով տրամադրել վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու եւ վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանք՝ թաքցնելով օտարերկրյա քաղաքացիություն ունենալու հանգամանքը: Նշված քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է:

79 քրեական վարույթից 5-ը՝ 9 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Հիշյալ բոլոր քրեական վարույթներով կատարվել են բազմաթիվ ապացուցողական եւ վարութային գործողություններ, հարցաքննվել՝ շուրջ 1000 անձ:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ 2026 թվականի հունիսի 7-ին նշանակված ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում, դրան հաջորդող շրջանում ՀՀ քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիների ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու եւ գործունեությունը համակարգելու նպատակով:

ՎԻՐԱՎՈՐՆԵՐ ԿԱՆ

Մայիսի 28-ին ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 14:00-ի սահմաններում Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհի 67-րդ կմ հատվածում՝ թերակղզի տանող ճանապարհի սկզբանամասում «Toyota Camry»-ն դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ հայտնվել ստորգետնյա հետիոտնային անցման աստիճանների վրա՝ բախվելով բետոնե հենապատին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով 2 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սեւան» բժշկական կենտրոն:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Աղասի Խաչատրյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Իգոր Ղազարյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Ներսիկ Գրիգորյանի, վաշտի հրամանատար Հրաչյա Գեւորգյանի եւ վաշտի հրամանատարի տեղակալ Արսեն Ստեփանյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Արսեն Կիրակոսյանը եւ Արթուր Դանիելյանը: Վթարի մասին ՊԾ Գեղարքունիքի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Սարգիս Մարգարյանի, վարչության պետի տեղակալ Արման Հովհաննիսյանի, Սեւանի քննչական բաժնի պետ Թորգոմ Չանդոյանի եւ օրվա հերթապահ քննիչի գլխավորությամբ: Վթարի փաստով Սեւանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է վարորդի եւ վիրավորների ինքնությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԼՌԵՑՆԵԼ

ArmLur.am-ի ձեռքում է հայտնվել ԱԱԾ շենքը հրկիզել փորձող 31-ամյա Ռաֆֆի Մանդալյանի պաշտպանի դիմումը Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին:

«2026 թվականի մայիսի 22-ին բողոք-միջնորդություն է ուղարկվել ի թիվս այլ պետական մարմինների նաեւ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, հասցեագրված Ձեզ՝ «Թիվ 15119826 քրեական վարույթով Ռաֆֆի Կարոյի Մանդալյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված հանրային քրեական հետապնդման իրավական որակումը փոփոխելու վերաբերյալ», որով մարդու իրավունքների պաշտպանից խնդրել ենք կոնկրետ գործնական քայլեր ձեռնարկել Ռաֆֆի Մանդալյանի նկատմամբ ապօրինությունները դադարեցնելու, անհամաչափ մեղադրանքը վերաորակելու ուղղությամբ, մեղադրյալ Ռաֆֆի Մանդալյանի նկատմամբ դատահոգեբուժական եւ հոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելուց քրեական հետապնդման մարմինների հրաժարվելու անհիմն ձգտումը հաղթահարելու ուղղությամբ: Ինչպես նաեւ խնդրել ենք հանձնարարել՝ սույն բողոքը ստանալուն պես պատասխանատու կատարողը Ռաֆֆի Մանդալյանի պաշտպանների հետ կապ հաստատի՝ սույն գործով առավել ուշագրավ հանգամանքներ պարզաբանելու համար, սակայն մինչ օրս որեւէ արձագանք չկա: ՀՀ գլխավոր դատախազությունում եւ վարույթն իրականացնող մարմնում բողոք-միջնորդության քննարկման արդյունքները պաշտպանության կողմին դեռեւս հայտնի չեն, իսկ վարույթն իրականացնող քննիչ Ռ. Հակոբյանը երեկ տեղեկացրել է, որ 29.05.2026 թվականին անգամ նախատեսում է նախաքննության ավարտ հայտարարել, ինչը նշանակում է, որ քրեական վարույթով պատասխանատու անմիջական եւ վերադաս պաշտոնյաները բողոքով բարձրացված հարցերին դրսեւորում են անտարբեր վերաբերմունք, փորձում են ամեն ինչ անել պաշտպանների փաստարկները լռեցնելու համար:

Ակնկալում ենք Ձեր հրատապ միջամտությունը եւ հանձնարարականը բողոք-միջնորդությամբ բարձրացված՝ Ռաֆֆի Մանդալյանի նկատմամբ ապօրինությունները դադարեցնելու, ինչպես նաեւ պաշտպաններիս բարձրացված հարցերը բովանդակային եւ օբյեկտիվ քննարկելու վերաբերյալ Ձեր աջակցությունը ստանալու համար: Այս հարցով հենց այսօր հրավիրելու ենք ՁԼՄ-ներ ուշադրությունը... Խնդրում ենք այցելել Ռաֆֆի Մանդալյանին, ով պահվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Մայիսի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է հոգեկան ներգործության, խարդախության 7-ական դեպք:

ՄԱՐԶ

5–ՐԴ ՏԱՐԻՆ Է՝ ՆՈՐՈԳՎՈՒՄ Է

Մայիսի 29-ին Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում նախընտրական քարոզչություն էր կատարում, ելույթ ունեցավ քաղաքի կենտրոնում գտնվող մշակույթի պալատի շենքի առաջ: Մշակութային այդ օջախը 2022 թվականի նոյեմբերից, 5-րդ տարին է, ինչ գտնվում է վերանորոգման գործընթացի մեջ: Վաղուց այդտեղ շինարարական աշխատանքներ չեն կատարվում, մշակույթի տան աշխատակազմը հարկադիր պարապուրդի համար իրենց աշխատավարձերի 2/3-ի չափով վարձատրվում է: Մշակույթի պալատի չգործելը բացասաբար է անդրադառնում Դիլիջան քաղաքի ու նույնանուն համայնքի մշակութային կյանքի վրա: 1972 թվականին կառուցված այդ շենքը կես դար ակտիվ է պահել Դիլիջանի մշակութային կյանքը, դարձել քաղաքի վարչական կենտրոնի դիմագծի անբաժանելի մասը: Մշակույթի պալատը վերջին անգամ նորոգվել է 1986 թվականին, հետո վնասվել՝ 1988 թվականի երկրաշարժից: Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը իրականացվում էր սուբվենցիոն ծրագրով, ավելի քան 283 միլիոն դրամ արժեքով: Այդ գումարի ավելի քան 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, մնացածը՝ ՀՀ պետական բյուջեի: Դիլիջանի մշակույթի պալատի առաջ ելույթ ունեցած Նիկոլ Փաշինյանին ոչ մի դիլիջանցի հարց չտվեց, թե երբ է շարունակվելու, ավարտվելու Դիլիջանի մշակույթի պալատի վերանորոգումը: Ապրիլի 6-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել. «Նախկինում հայտնել եք. «ՀՀ Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկվում են, ինչպես մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, այնպես էլ ՏԿԵՆ-ի համապատասխան մասնագետների կողմից: 2024 թվականին մշտադիտարկման են ենթարկվել ինչպես 2024 թվականի, այնպես էլ նախորդ տարիներին հաստատված եւ 2024 թվական տեղափոխված ծրագրերը: Մշտադիտարկման թիվը գերազանցում է 250, ծրագրերից մեկում առկա է ժամկետի ուշացում (Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգում), որի համար ձեռնարկվել են միջոցներ 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար»): Ե՞րբ է վերսկսվելու, ավարտվելու Դիլիջանի մշակույթի տան նորոգումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնելու»: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Դիլիջան քաղաքի մշակույթի տան վերանորոգման շինարարական աշխատանքները կասեցվել են անբարեխիղճ շինարարի պատճառով: Հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման նոր մրցույթ: Կա հաղթող կազմակերպություն: Փաստաթղթերի պատրաստ լինելուց հետո կհայտարարվի շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ: Այլ մանրամասների համար կարող եք դիմել համայնքապետարան»:

ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԱՄՆ-Ն ՈՒ ԻՐԱՆԸ «ՇԱՏ ՄՈՏ ԵՆ» ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ

ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ համաձայնությունը դեռ վերջնական չէ, սակայն կողմերը «շատ մոտ են» գործարքի կնքմանը: Այս մասին հայտարարել է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը՝ նշելով, որ բանակցություններում դեռ կան մի քանի չլուծված հարցեր:

BBC-ի հարցին, թե արդյոք Դոնալդ Թրամփը մոտ է համաձայնագիրը ստորագրելուն, Վենսը պատասխանել է, որ դեռ վաղ է ասել՝ «երբ եւ արդյոք» այն վերջնականապես կկնքվի:

Ավելի վաղ ամերիկացի պաշտոնյաները BBC-ին հայտնել էին, որ Վաշինգտոնն ու Թեհրանը համաձայնեցրել են գործարքի շրջանակը, սակայն այն դեռ պետք է հաստատվի Թրամփի եւ Իրանի ղեկավարության կողմից: Միեւնույն ժամանակ, իրանական Tasnim գործակալությունը հայտնել է, որ համաձայնությունը դեռ վերջնականացված չէ:

Ըստ հրապարակումների՝ հնարավոր համաձայնագիրը նախատեսում է հրադադարի երկարաձգում եւս 60 օրով եւ բանակցությունների մեկնարկ Իրանի միջուկային ծրագրի շուրջ: Քննարկվում է նաեւ Հորմուզի նեղուցով «անարգել» նավարկության վերականգնումը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի կողմից որոշ պատժամիջոցների թուլացումը, որպեսզի Իրանը կարողանա վերսկսել նավթի արտահանումը: Վենսը նշել է, որ բանակցություններում հիմնական տարաձայնություններից մեկը վերաբերում է ուրանի հարստացման հարցին: ԱՄՆ-ը երկար ժամանակ պահանջում է, որպեսզի Իրանը դադարեցնի բարձր հարստացված ուրանի արտադրությունը եւ ոչնչացնի իր պաշարները, որոնք տեսականորեն կարող են օգտագործվել միջուկային զենք ստեղծելու համար:

Միաժամանակ Սպիտակ տունը հերքել է իրանական լրատվամիջոցներում տարածված տեղեկությունները 14 կետից բաղկացած ոչ պաշտոնական հուշագրի մասին՝ այն անվանելով «ամբողջական կեղծիք»: Թրամփի վարչակազմի ներկայացուցիչները շարունակել են ընդգծել, որ եթե բանակցությունները ձախողվեն, «B տարբերակը»՝ռազմական գործողությունների վերսկսումը, շարունակում է մնալ օրակարգում: Վերջին օրերին կողմերը նաեւ փոխադարձ մեղադրանքներ են հնչեցրել հրադադարի խախտման վերաբերյալ: Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել է, որ հարվածել է տարածաշրջանում գտնվող ամերիկյան ռազմաբազային՝ ԱՄՆ-ի նոր ավիահարվածներից հետո: Իրանական լրատվամիջոցները նաեւ պնդել են, թե խոցվել է ամերիկյան օդանավ, սակայն ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը հերքել է այդ տեղեկությունը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՑ ՀԵՏՈ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՉԻ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ»

Նիկոլ Փաշինյանը ամեն ինչ անում է, որ թաքցնի իր ձախողումները, քանի որ ամենամեծ իր ձախողումը ինքը ունեցել է բանակի հարցում, մեր տնտեսության հարցում, Արցախը հանձնելու հարցում. դրա համար նույնիսկ չեմ պատկերացնում իր արած այս քայլը ինչին է ուղղված: Ինձ թվում է՝ ավելի շատ ուղղված է, որ ցույց տա ինչպես է ինքը ծախսել ութ միլիարդ դոլարը, որ կախել է մեր տնտեսության գլխին: Այդ մասին հայտարարել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ Սամվել Կարապետյանը՝ Արմենիա Հ/Ը-ի եթերում խոսելով զորահանդեսի մասին:

Կարապետյանը ընդգծել է՝ իշխանության գալով կգնեն ամենաժամանակակից, ամենակարեւոր, ամենապետքական տեխնիկան, որը կպաշտպանի ժողովրդին, որը կիագեցնի սահմանները. կստեղծեն լուրջ տեխնիկայով հագեցված սահմաններ, կքչացնեն զինծառայողների դերը սահմաններում եւ կլինի խելացի, ճիշտ կազմակերպված բանակ:

Սամվել Կարապետյանը նշել է՝ հայ ժողովրդին պատերազմով սպառնում են Ալիեւը, Փաշինյանը եւ Գորշ գայլեր. «Ուրիշ ոչ մեկ հայ ժողովրդին պատերազմով չի սպառնում: Ես իրոք վստահեցնում եմ, որ օրը Փաշինյանը հեռացվեց Հայաստանի իշխանությունից, ոչ մեկ նույնիսկ չի փորձի Հայաստանին եւ հայ ժողովրդին սպառնալ պատերազմով: Դա անմիջապես դուք կտեսնեք, եւ մենք կվարենք ճիշտ դիվանագիտություն, կունենանք լուրջ երաշխավորներ, եւ ոչ մեկ չի համարձակվելու հարձակվել Հայաստանի վրա, հայ ժողովրդի վրա»,- հավելել է նա:

Հարցին, թե ովքեր կարող են լինել այսօր երաշխավորներ Հայաստանի համար, «Ուժեղ Հայաստան» կուսակցության նախագահ, վարչապետ Սամվել Կարապետյանը ասել է. «Աշխարհի մասշտաբով երաշխավորներ լինում են միայն խոշոր գերտերությունները, որպեսզի ներշնչեն վստահություն: Այդպիսի երկրներ կարող եմ թվել թե՛ Ամերիկայի Միացյալ նահանգները, թե՛ Ռուսաստանը, թե՛ Չինաստանը, թե՛ Եվրամիությունը: Մենք հասնելու ենք դրան, որ ունենանք ճիշտ երաշխավորություն, որ մեր ժողովրդին ոչ մեկ չկարողանա սպառնալ: Ինչպե՞ս մենք կարող ենք վստահել Ալիեւին եւ Ալիեւի երաշխավորությանը: Ինքը արդեն ցույց է տվել, որ ինքը թույլ, անկարող ղեկավար է, ինքը վախկոտ է, ինքը վախենում է Ալիեւից. մենք չենք վախենում Ալիեւի, մենք շատ արագ ենք բերելու խաղաղություն մեր երկրին եւ վստահելի երկարատեւ խաղաղություն»:

Նա նաեւ անդրադարձել է Փաշինյանի հայտարարությանը, որով վերջինս ասել էր՝ Կարապետյանը պետք է գտնվի քրեակատարողական հիմնարկում. «Փաշինյանը հունիսի 7-ից հետո ոչ մի որոշում չի կարող կայացնել, առավել եւս իմ ապագայի մասով. ինքը ավելի ճիշտ կանի թող երկար մտածի իր եւ իր խմբակի ապագայի մասին: Իսկ ինչ վերաբերվում է ադրբեջանցիների Հայաստան գալուն, մարդկանց թվում է՝ մենք ինչ-որ նախընտրական քարոզարշավ ենք այդ հարցով իրականացնում: Դա արդյունք է այն հայտարարությունների, որ մենք ամեն օր լսում ենք Ալիեւից եւ իր օգնականներից: Եթե չկա այդպիսի բան, ես առաջարկում եմ՝ թող Փաշինյանը վաղը առավոտյան հայտարարի, որ հունիսի 18-ին 19-ին Նախիջեւանում Ալիեւը չի կարող անցկացնել փառատոն»:

● *Ըստ վիճակագրության՝ մայիսի 26-ից 27-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 3 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՉԻ ԲԱՐՁՐԱՑՆԻ

Յունիբանկը որոշում է կայացրել անփոփոխ թողնել անշարժ գույքի գրավով սպառողական եւ հիփոթեքային վարկերի ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքները, որոնք ենթակա էին բարձրացման 2026 թվականի մայիսին: Հաճախորդների ամսական վճարումները չմեծացնելու նպատակով բանկը մինչեւ 2026 թվականի հոկտեմբերի 31-ը կշարունակի կիրառել գործող տոկոսադրույքները՝ չիրականացնելով նախատեսված բարձրացումը: Միեւնույն ժամանակ, այն վարկերի դեպքում, որոնց համար նախատեսված էր հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի իջեցում, Յունիբանկը կատարել է համապատասխան նվազեցում եւ սահմանված կարգով տեղեկացրել հաճախորդներին:

Յունիբանկը բարձր է գնահատում իր բարեխիղճ հաճախորդների վստահությունը եւ շարունակում է քայլեր ձեռնարկել վարկավորման բարենպաստ եւ հարմարավետ պայմաններ ապահովելու ուղղությամբ: *(Գ)*

ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ՈՒՂԵՑՈՒՅՑ IDRAM&IDBANK-ԻՑ

Մոտենում է հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, ինչը եւս մեկ առիթ է բոլորին հիշեցնելու երեխաների իրավունքների եւ բարեկեցության կարեւորության մասին:

Բացի կարեւոր խորհուրդ ունենալուց, սա նաեւ ժպիտների օր է: Իսկ ի՞նչ նվիրել փոքրիկներին. հավանաբար բոլորս էլ ունեինք խաղալիքներ, որոնք շուտ մոռացվել են, բայց ունենք առաջին անգամ ծնողների հետ խաղային ատրակցիոն նստելու հետ կապված վառ հիշողություններ:

Այս տարի Իդրամն ու IDBank-ը առաջարկում են նվիրել ոչ միայն պարզապես իրեր, այլեւ միասին անցկացրած ժամանակ: 2026 թվականի մայիսի 28-ից հունիսի 14-ը ներառյալ՝ Idram&IDBank հավելվածով կատարելով QR վճարումներ մանկական զվարճանքի հետեւյալ կենտրոններում, կստանաք մինչեւ 15% ակնթարթային idձoin (սակայն ոչ ավելի, քան 5000 idձoin արշավի ընթացքում՝ հարկումից հետո).

Երեւան Պարկ,
Հաղթանակ զբոսայգի,
Նավապետ Քիդի գանձերի կղզի,
Մեջիք լենդ (Էրեբունի մոլի, Մեգամոլի, Մաշտոց 5-ի մասնաճյուղերում),
Փլեյ Լաբ,
Գեյմ Լաբ,
Ալբի Լենդ:

Հիշեք, որ երեխաների համար լավագույն նվերը ձեզ հետ անցկացրած ժամանակն է: Իսկ Իդրամը եւ IDBank-ը կօգնեն, որ այդ ժամանակը լինի հաճելի ու անակնկալներով լի:

ԻԴՐԱՄ ԵՎ IDBANK
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ
(Գ)

NORTHERN TERROIR

ԳԻՆԻՆԵՐԸ ՏԱՎՈՒՇԻ ՈԳԻՆ ՓՈԽԱՆՑԵՑԻՆ

27-ը մայիսի, 2026թ., Երեւան. Հայաստանում պատմության մեջ առաջին անգամ անցկացվող Concours Mondial de Bruxelles 2026 միջազգային հեղինակավոր մրցույթի պատշոնական մեկնարկից հետո Team ընկերությունների խմբի Northern Terroir ընկերությունը Grand Hotel Yerevan-ում կազմակերպել է մասնավոր դեգուստացիոն երեկո:

Միջոցառմանը հյուրընկալվել են մրցույթի շրջանակում Հայաստան ժամանած միջազգային սոմելյեներ, գինեգործության ոլորտի լրագրողներ եւ ներկայացուցիչներ, հյուրընկալության ոլորտի մասնագետներ եւ տուրոպերատորներ:

Մոտ 130 հյուրի համախմբած միջոցառման նպատակն էր միջազգային մասնագիտական հանրությանը ներկայացնել Հայաստանի հյուսիսային գինեգործական կարեւոր տարածաշրջաններից մեկի՝ Տավուշի բնաշխարհը, գաստրոնոմիական մշակույթն ու հայկական տեղական խաղողի տեսակները՝ միաժամանակ ընդգծելով Հայաստանի աճող դերը համաշխարհային գինեգործության քարտեզում:

«Wild Luxury» ոճով կազմակերպված երեկոն ձեւավորվել էր որպես հյուսիսային Հայաստանի բազմաշերտ ներկայացում՝ գինու, համերի, բույրերի եւ պատմությունների միջոցով: Հյուրերը մասնակցել են դեգուստացիոն փորձառության, որի առանցքում Northern Terroir-ի գինիների հիմքը կազմող հայկական տեղական Լալվարի եւ Բանանց խաղողի տեսակներն էին:

«CMB 2026-ի շրջանակում միջազգային գինեգործական մասնագետների հյուրընկալումը կարեւոր էր ոչ միայն Northern Terroir-ի, այլեւ հայկական գինեգործության համար: Մենք ցանկանում էինք, որ հյուրերը Տավուշը բացահայտեն ոչ միայն գինու, այլեւ տարածաշրջանի խոհարարական մշակույթի, մթնոլորտի եւ մարդկանց միջոցով»,-նշում է Northern Terroir-ի գլխավոր տնօրեն Ջառա Մազմանյանը:

Դեգուստացիոն ներկայացումը վարել է Northern Terroir-ի բրենդային դեսպան Արամ Կիրակոսյանը, որը հյուրերին ներկայացրել է գինեգործարանը, գինու ստեղծման փիլիսոփայությունը եւ Տավուշի տերուարի առանձնահատկությունները:

Երեկոյի ընթացքում գինիները համադրվել են տարածաշրջանային բաղադրիչներով եւ տեղական խոհարարական ավանդույթներով ոգեշնչված ուտեստներով: Գաստրոնոմիական կոնցեպտի հեղինակը եղել է Arm Food Lab-ի հիմնադիր, Ootelie Artisan Bakery եւ Caffeine Coffee Roasters նախագծերի համահիմնադիր Անի Հարությունյանը՝ գինու փորձագետ Ստեփան Հաջյանի հետ համագործակցությամբ:

«Տավուշի խոհանոցը խորապես կապված է սեզոնայնության, պահպանման մշակույթի եւ շրջակա բնությունից ստացվող բաղադրիչների հետ: Համադրությունները ստեղծվել էին այնպես, որ արտացոլեն տարածաշրջանի բնավորությունը եւ, միաժամանակ, բնականորեն լրացնեն գինիները»,-ասում է Անի Հարությունյանը: Հյուրերին ներկայացվել են ZOլ Sparkling-ը՝ վայրի գարնանային կանաչիներով եւ ավանդական հացահատիկներով պատրաստված թթխմորային խրթխրթան հացի հետ, TUS Classic-ը՝ վայրի սնկով գաթայի ժամանակակից մեկնաբանությամբ, եւ TUS Reserve-ը՝ Տավուշում աճեցված խոզի մսով:

Նման միջոցառումները նպաստում են երկրի աճող տեսանելիությանը ոչ միայն որպես գինեգործական տարածաշրջան, այլեւ որպես գինու տուրիզմի, գաստրոնոմիայի եւ հյուրընկալության նոր ուղղություն:

Northern Terroir-ի մասին

Northern Terroir-ը հիմնադրվել է 2017 թվականին՝ նպատակ ունենալով գինիների միջոցով փոխանցել Հայաստանի Տավուշի մարզի ինքնատիպ բնույթն ու առանձնահատկությունները: Ընդգրկելով Տավուշի հյուսիսային տերուարի բացառիկ հնարավորությունները՝ հաղթանակ գյուղում գտնվող խաղողի այգիները մշակվում են մեծ ուշադրությամբ՝ բացահայտելու տարածաշրջանի բնական ներուժը: Ծովի մակարդակից միջինում 450 մետր բարձրության վրա գտնվող այգիները տեղակայված են մայրցամաքային կլիմայում՝ տաք ամառներով եւ մեղմ ձմեռներով:

Մասնագետների պրոֆեսիոնալիզմը, համակարգված մոտեցումը, նվիրվածությունն ու թիմին պատկանելու ուժեղ զգացողությունը նպաստում են Northern Terroir-ի հաջողությանը եւ լայն ճանաչմանը:

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

Յունիբանկը թողարկել է 9 մլրդ ՀՀ դրամ ծավալով անժամկետ դրամային պարտատոմսեր, որոնք նախատեսված են բացառապես բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի համար:

Նոր թողարկման արժեկտրոնային եկամտաբերությունը կազմում է 13.25%, ինչը տվյալ ներդրումային գործիքը դարձնում է շուկայում առավել գրավիչ առաջարկներից մեկը՝ երկարաժամկետ եւ կայուն եկամուտ ակնկալող ներդրողների համար:

Յունիբանկի բաժնետեր չհանդիսացող ներդրողները կարող են ձեռք բերել անժամկետ պարտատոմսերը՝ մասնակցելով Յունիբանկի ընթացիկ բաժնետոմսերի տեղաբաշխմանը: Ավելի վաղ բանկը հայտարարել էր 3.9 մլրդ ՀՀ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի թողարկման մասին: Մինչեւ 2026 թվականի սեպտեմբերի 9-ը նախատեսվում է տեղաբաշխել 10 մլն բաժնետոմս:

Անժամկետ պարտատոմսերի նոր թողարկմամբ Յունիբանկը շարունակում է ընդլայնել իր բաժնետերերի հնարավորությունները եւ նպաստել Հայաստանի կապիտալի շուկայի զարգացմանը՝ առաջարկելով երկարաժամկետ ներդրումային ժամանակակից եւ արդյունավետ գործիքներ:

Տեղաբաշխման պայմանների համաձայն՝ ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերել անժամկետ պարտատոմսեր՝ յուրաքանչյուր 2 600 հատ սովորական բաժնետոմսի դիմաց 300 պարտատոմս հարաբերակցությամբ: 2 600-ից ավելի բաժնետոմսերի դեպքում ձեռք բերվող անժամկետ պարտատոմսերի առավելագույն քանակը համամասնորեն ավելանում է՝ յուրաքանչյուր լրացուցիչ 8 սովորական բաժնետոմսի դիմաց 1 անժամկետ պարտատոմս հարաբերակցությամբ: Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն քանակը սահմանված է 100 հատ:

Անժամկետ պարտատոմսերը նախատեսվում է տեղաբաշխել մինչեւ 09.09.2026թ.: Արժեկտրոնային եկամտաբերությունն առաջին 36 ամիսների համար սահմանված է տարեկան 13.25%, որից հետո այն կձեւավորվի պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հիման վրա:

Անցյալ տարի Յունիբանկն առաջինը Հայաստանում թողարկեց անժամկետ պարտատոմսեր՝ ընդհանուր առմամբ 6.5 մլրդ ՀՀ դրամ եւ 9 մլն ԱՄՆ դոլար ծավալով՝ հաջողությամբ տեղաբաշխելով դրանք նախատեսված ժամկետից զգալիորեն շուտ: Տեղաբաշխումն ուղեկցվեց շուկայական բարձր ակտիվությամբ եւ դարձավ Հայաստանի կապիտալի շուկայի ամենանշանակալի իրադարձություններից մեկը:

Անժամկետ պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025թ. նոյեմբերի 26-ի Թիվ 1/427Ա որոշմամբ, իսկ Ծրագրային ազդագրի լրացումը՝ 2026թ. Մայիսի 22-ի Թիվ 1/228Ա որոշմամբ: Ներդրողները Անժամկետ պարտատոմսերի Ծրագրային ազդագրի եւ ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել Յունիբանկի գլխամասային գրասենյակում եւ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային պատճենը www.unibank.am կայքից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

30-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԸ ԿԱՅԱՑԵԼ Է

Տեղի է ունեցել հայ առաջին օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինյանի անվան հուշամրցաշարը, որը նվիրված էր անվանի մարզիկի մահվան 30-րդ տարելիցին: Հուշամրցաշարին մասնակցել է 119 մարզիկ՝ 71 տղա եւ 48 աղջիկ: Տղաների մրցապայքարն ընթացել է 5 գործիքի՝ օղակների, նժույգքափերի, հենացատկի, զուգափայտերի, պտտաձողի վրա եւ ազատ վարժություններում, իսկ աղջիկներինը՝ զուգափայտերի, հենացատկի, հավասարակշռության գերանի եւ ազատ վարժություններում:

Մրցումներին հետեւել են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Հասմիկ Ավագյանը, Հրանտ Շահինյանի դուստրը՝ Լուիզա Շահինյանը, Երեւանի Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը, մարզաշխարհի այլ ներկայացուցիչներ, մարզասերներ:

Ողջունելով ներկաներին՝ նախարարն ընդգծել է, որ Հրանտ Շահինյանի անունը կրող մարզադպրոցն այս նախաձեռնությամբ լավագույնս արժեւորում է մեծանուն մարզիկի հիշատակը. «Խորհրդանշական է, որ մեծ մարզիկի հիշատակին նվիրված այս մրցաշարը նշանավորում ենք մարմնամարզիկների նոր սերնդի հաջողություններով: Այսօր կիամոզվենք, որ տաղանդավոր երեխաներ ունենք մարմնամարզությունում, որոնք շարունակելու են լավ ավանդույթները՝ բազմապատկելով հաջողությունները»:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել մրցաշարի կազմակերպիչներին՝ ընդգծելով, որ նման նախաձեռնությունները կարեւոր հարթակ են ոչ միայն մրցակցության, այլեւ մարզադպրոցային կյանքի զարգացման ու հանրայնացման համար: Նախարարն անդրադարձել է նաեւ Կառավարության կողմից հատկապես մանկապատանեկան սպորտի զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերին: Նրա խոսքով՝ վերջին տարիներին ՀՀ վարչապետի գավաթի մրցաշարերի կազմակերպմամբ հետեւողականորեն խրախուսվում է դպրոցականների ակտիվ ֆիզիկական կենսակերպը եւ տարբեր մարզաձեւերով զբաղվելը: Նա նշել է, որ արդեն անցկացվում են դպրոցականների մրցաշարեր վազքի, հեծանվավազքի, խճուղավազքի, սեղանի թենիսի, բասկետբոլի եւ վոլեյբոլի մարզաձեւերում, ինչը նպաստում է երեխաների առողջ ապրելակերպին եւ սպորտային ակտիվությանը:

Անդրադառնալով մարզական ենթակառուցվածքների զարգացմանը՝ Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ Կառավարության առաջնահերթություններից են մարզադպրոցների պայմանների բարելավումը, նոր գույքի ձեռքբերումը եւ մարզական միջավայրի արդիականացումը: Այս համատեքստում նա տեղեկացրել է, որ ավարտական փուլում է Հրանտ Շահինյանի անվան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության նոր մասնաշենքի կառուցումը:

«Հուսով եմ՝ սեպտեմբերից գեղարվեստական մարմնամարզությամբ զբաղվող մեր երեխաները կկարողանան մարզվել ամբողջությամբ նոր պայմաններում, որը բարձր արդյունքների եւ նոր հաջողությունների խթան կհանդիսանա»,- նշել է Ժաննա Անդրեասյանը եւ հավելել՝ շարունակվում են նաեւ մարզադպրոցի մյուս մասնաշենքերի վերանորոգման եւ նոր գույքով համալրման աշխատանքների նախապատրաստական աշխատանքները:

Ժաննա Անդրեասյանը նշել է նաեւ, որ ակտիվ փուլում է Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցի կառուցումը. միաժամանակ, ավելի քան 100 մարզական ենթակառուցվածքներում ակտիվ շինարարություն է ընթանում:

Նախարարը հիշեցրել է նաեւ, որ հաջորդ տարի Հայաստանը հյուրընկալելու է սպորտային մարմնամարզության Եվրոպայի մեծահասակների առաջնությունը՝ ընդգծելով, որ այն մեծ խթան եւ ոգեշնչման աղբյուր կլինի երիտասարդ մարզիկների համար, որոնք հնարավորություն կունենան մրցելու սեփական հարկի տակ՝ հայ հանդիսատեսի աջակցությամբ:

Ժաննա Անդրեասյանը հաջողություն եւ հաղթանակ է մաղթել մրցաշարի բոլոր մասնակիցներին՝ շեշտելով, որ սպորտը ոչ միայն ֆիզիկական պատրաստվածություն է, այլեւ մարդու բնավորության, կամքի, նպատակասլացության եւ հետեւողականության ձեւավորման կարեւորագույն ճանապարհ: Միջոցառման շրջանակում նախարար Ժաննա Անդրեասյանը պարգեւատրվել է Հրանտ Շահինյանի անվան հուշամեդալով:

Հուշամրցաշարի մասնակիցների թվում են նաեւ Վանաձորի, Գյումրու եւ Էջմիածնի մարզադպրոցների հավաքական թիմերը: Մրցաշարին մասնակցում են 16-ից 19 տարեկան տղաներ եւ աղջիկներ: Հրանտ Շահինյանն Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն եւ կրկնակի փոխչեմպիոն է, աշխարհի կրկնակի չեմպիոն, ԽՍՀՄ յոթակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ՀԽՍՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ, միջազգային կարգի մրցավար, ինչպես նաեւ պատանի մարմնամարզիկների դպրոցի հիմնադիր: Մարմնամարզության համաշխարհային ֆեդերացիայի որոշմամբ նժույգաթափի վրա Շահինյանի կատարած վարժություններից մեկը կոչվում է նրա անունով:

ՓԱԹԵԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Գ.

ՎՏԲ-Հայաստան բանկը գործարկել է անհատ ձեռնարկատերերի համար նախատեսված փաթեթային առաջարկ, որը ներառում է հաշվարկային հաշիվ, բիզնես քարտ եւ հեռահար բանկային սպասարկման համակարգ: Առաջարկը միտված է բանկային սպասարկման գործընթացի պարզեցմանը, հիմնական ծառայությունների ծախսերի նվազեցմանը եւ փոքր բիզնեսի ֆինանսական կառավարման արդյունավետության ու հարմարավետության բարձրացմանը:

Հատուկ առաջարկի շրջանակում հաճախորդը հնարավորություն է ստանում բացել մեկ հաշվարկային հաշիվ ՀՀ դրամով, ձեւակերպել հաշվին կցված մեկ MIR բիզնես քարտ, ինչպես նաեւ միանալ «-Բանկ-հաճախորդ» հեռահար բանկային սպասարկման համակարգին: Սա հնարավորություն է տալիս արդյունավետ կառավարել միջոցները, իրականացնել գործարքներն՝ օնլայն եւ վերահսկել ֆինանսական հոսքերը՝ առանց բանկ այցելելու անհրաժեշտության: Փաթեթի տարեկան արժեքը կազմում է 30 հազար ՀՀ դրամ: Նախատեսված է նաեւ ամսական վճարման հնարավորություն՝ ամսական 3 հազար ՀՀ դրամ:

«Մենք ձգտում ենք անհատ ձեռնարկատերերի համար բանկային ծառայությունները դարձնել առավել հարմարավետ եւ հասանելի: Փաթեթային առաջարկը միավորում է հիմնական ծառայությունները մեկ փաթեթի շրջանակում՝ հնարավորություն տալով հաճախորդներին խնայել ժամանակ եւ օպտիմալացնել ծախսերը, ինչպես նաեւ կենտրոնանալ իրենց բիզնեսի զարգացման վրա՝ ֆինանսների առավել պարզ եւ արդյունավետ կառավարման շնորհիվ», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Եվգենի Մոտովիլովը:

Բանկը միաժամանակ նվազեցրել է անհատ ձեռնարկատերերի համար հեռահար բանկային սպասարկման համակարգը միացնելու միջնորդավճարը. ամսական միջնորդավճարը կազմում է 2 հազար, իսկ տարեկանը՝ 20 հազար ՀՀ դրամ:

Հատուկ առաջարկի մանրամասն պայմաններին կարելի է ծանոթանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն՝ 8787 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ

Մադրիդի «Ռեալի» պաշտոնական կայքը հայտարարել է ակումբի նախագահական ընտրությունների անցկացման օրը: Քվեարկությունը կկայանա կիրակի՝ հունիսի 7-ին: Այս անգամ նախագահի պաշտոնի համար կպայքարի երկու թեկնածու՝ ակումբի գործող նախագահ Ֆլորենտինո Պերեսը եւ իսպանացի հայտնի գործարար Էնրիկե Ռիկելմեն: Հատկանշական է, որ 2006 թվականից ի վեր առաջին անգամն է, երբ ղեկավարի պաշտոնին հավակնում է մեկից ավելի անձ, ինչն էլ ավելի է մեծացնում ինտրիգը սպասվող ընտրություններում:

Ավելի վաղ տեղեկություններ էին տարածվել, որ Ռիկելմեն որպես բանկային երաշխիք տրամադրել է «Ռեալի» բյուջեի 15%-ը, ինչը կազմում է մոտավորապես 187-193 միլիոն եվրո: Հիշեցնենք, որ ընտրություններին մասնակցելու եւ քվեարկելու իրավունք ունեն միայն ակումբի 18 տարին լրացած անդամները:

ԱՆՍԱԿՆԿԱԼ

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ Arca վճարային համակարգը՝ Կոնվերս Բանկի ու Սիթիզեն մասնագիտությունների քաղաքի հետ համատեղ, հայտարարում է խրախուսման արշավ: Արշավի շրջանակում՝ մայիսի 28-ից մինչեւ հունիսի 5-ը ներառյալ, Սիթիզենում Կոնվերս Բանկի Arca քարտով վճարումներ կատարած անձինք կկարողանան մասնակցել ինտերակտիվ խաղերի եւ ստանալ նվերներ:

Գլխավոր մրցանակը կլինի դեպի Դիսնեյլենդ ընտանեկան ուղեւորությունը (ուղեգիրը նախատեսված է երեք անձի համար): Հնարավորությունից օգտվելու համար պարզապես պետք է կատարել գնումներ Սիթիզենում, վճարել Կոնվերս Բանկի Arca քարտով, լրացնել տվյալները եւ գցել մասնակցության կտրոնն արկղի մեջ:

Հաղթողը կընտրվի պատահականության սկզբունքով հունիսի 10-ին՝ ժամը 15:00-ին, ամփոփման ընթացքում:

Մասնակիցը պարտադիր պետք է ներկա լինի ամփոփմանը եւ ներկայացնի մասնակցության կտրոնն ու անձը հաստատող փաստաթուղթ:

Մանրամասն՝ arca.am, **010 59 22 11**

Arca վճարային համակարգը եւ Կոնվերս Բանկը վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից (Գ)

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունսի 6-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Մատնաչափիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում որդեգրումը, ո՞վ կարող է լինել որդեգրող, ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, ի՞նչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը, որտե՞ղ է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Վազգեն Սահակյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Որդեգրում (դստերագրում) (այսուհետ՝ որդեգրումը) թույլատրվում է միայն մինչեւ 18 տարեկան անձանց նկատմամբ եւ ելնելով նրանց շահերից՝հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգեւոր եւ բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները: Որդեգրումը հաստատվում է դատարանի կողմից եւ դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո որդեգրումը ենթակա է պարտադիր պետական գրանցման ՔԿԱԳ տարածքային մարմնում: Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Որդեգրման պետական գրանցումն իրականացնելու համար անհրաժեշտ է՝

որդեգրողների /որդեգրողի/ կամ նրանց կողմից լիազորված անձի գրավոր դիմումը (դիմումի ձեւանմուշը կարող եք ձեռք բերել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կայքից՝ www.moj.am հասցեով կամ ՔԿԱԳ մարմնից),

որդեգրման մասին դատարանի՝օրինական ուժի մեջ մտած վճիռը, որդեգրողների /որդեգրողի/ անձը հաստատող փաստաթղթերը, որդեգրողների ամուսնության վկայականը, որդեգրվողի ծննդյան վկայականը:

Մանրամասները՝ http://moj.am/services/civil_registry/item/520:

ՀՀ արդարադատության նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ փաստաթղթեր պետք է ներկայացնել գյուտի արտոնագիր (կարճաժամկետ արտոնագիր) ստանալու հայտ ներկայացնելու համար:

Հակոբ Գալստյան, 51 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Գյուտի արտոնագիր (կարճաժամկետ արտոնագիր) ստանալու հայտը ներառում է՝

1) դիմում՝ արտոնագիր (կարճաժամկետ արտոնագիր) ստանալու մասին (դիմումի ձեւը տես՝ Ձեւաթղթեր բաժնում).

2) գյուտի նկարագրությունը.

3) գյուտի հավակնության սահմանումը, որը ներառում է առնվազն մեկ անկախ կետ.

4) գծագրեր եւ այլ նյութեր, եթե դրանք անհրաժեշտ են գյուտի էությունը հասկանալու համար.

5) գյուտի համառոտ շարադրանքը (ռեֆերատ):

Հայտին կցվում են՝

1) լիազորագիր, եթե այն ներկայացվել է հավատարմատարի կամ ներկայացուցչի միջոցով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) հայտի փաստաթղթերի հայերեն թարգմանությունը, եթե դրանք ներկայացվել են այլ լեզվով.

3) սահմանված պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը, իսկ եթե պետական տուրքը վճարվել է նվազեցված դրույքաչափով, նաեւ նվազեցված դրույքաչափով վճարման հիմքերը հաստատող փաստաթուղթ՝ պետական տուրքի վճարման օրվա դրությամբ:

Մտավոր սեփականության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Արագածոտնի մարզում բախվել են «Honda»-ն ու «Opel»-ը. կա 5 վիրավոր, որոնցից մի քանիսին փրկարարները դուրս են բերել ավտոմեքենայից՝ օգտագործելով հատուկ տեխնիկա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 5 + 11 + 15
	Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 11 + 14
	Կոտայքի նախալեռներ	+ 7 + 10 + 16 + 18
	Գեղարքունիք	0 + 5 + 10 + 13
	Լոռի	+ 4 + 8 + 13 + 16
	Տավուշ	+ 5 +8 + 14 + 17
	Արագածոտնի լեռներ	0 + 3 + 11 + 14
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 12 + 16 + 20

	Արարատ	+ 10 + 13 + 18 + 21
	Արմավիր	+ 12 + 14 + 20 + 23
	Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 + 10 + 13
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 12 + 18 + 21
	Սյունիքի լեռներ	+ 1 + 4 + 10 + 13
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 + 13 + 16
	Սյունիքի հովիտներ	+ 11 + 14 + 17 + 21
	Երեւան	+ 11 + 13 + 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.05.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*